ԹԵՄԱ 2 ԱՆՏԻԿ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

§ 25. ՀՌՈՄԵԱԿԱՆ ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

1

Հաջորդ ճակատամարտերում հաղթանակը ձեռք բերվեց այնպիսի կորուստների գնով, որ Պյուռոսը բացականչեց. «Եվս մի այսպիսի հաղթանակ՝ և ես առանց բանակի կմնամ»: Այստեղից առաջացել է «Պյուռոսյան հաղթանակ» արտահայտություն, այսինքն՝ մեծ կորուստների գնով ձեռք բերված հաղթանակը:

2

Կարթագեն քաղաք-պետությունը գտնվում էր Հյուսիսային Աֆրիկայում, ներկայիս Թունիս քաղաքի տեղում:

Այն հիմնադրել էին փյունիկեցիները Ք.ծ.ա. IX դարում: Կարթագենի շրջակա տարածքը ծաղկուն հովիտ էր, որտեղ աճեցնում էին ձիթենի, խաղող, արմավենի և այլ մրգատու ծառեր, պահում էին անասունների մեծաքանակ հոտեր: Կարթագենի ընդարձակ և լավ պաշտպանված նավահանգիստը միշտ լեցուն էր առևտրական նավերով, որոնք հեռավոր երկրներ վաճառքի էին տանում կարթագենացի արհեստավորների պատրաստած բազմատեսակ ապրանքները: Հզոր նավատորմը ապահովում էր Կարթագենի գերիշխանությունը: Կարթագենը չուներ ցամաքային բանակ, անհրաժեշտության դեպքում բանակ էին հավաքագրում այլազգի վարձկաններից:

Ք.ծ.ա IV դարում Կարթագենը վերածվել էր հզոր ծովապետության, իրեն էր ենթարկել Միջերկրական ծովի արևմտյան մասի առափնյա շրջանները, Սարդինիա և Կորսիկա կղզիները, նաև Սիցիլիա կղզու արևմտյան մասը:

2 Հաննիբալի բանակը Իսպանիայից ցամաքով անցավ Իտալիա: ***Ք.ծ.ա. 216 թ. Կաննեի*** ճակատամարտում Հաննիբալը, ունենալով կրկնակի քիչ զորք, շրջապատեց և ոչնչացրեց հռոմեական բանակը:



Բայց հռոմեացիները կարողացան արագ ուշքի գալ և նոր բանակ կազմել: ***Մենապը դիկտատոր նշանակեց Ֆաբիոսին:*** Խուսափելով բաց ճակատամարտից, հռոմեացիները անընդհատ նեղում էին Հաննիբալի զորքերին: Նրանք հերթով հպատակեցրին նրա կողմն անցած իտալիկների ցեղերին, ապա գրավեցին Սիցիլիան: Հռոմեական բանակը ափ իջավ Աֆրիկայում: Հաննիբալը Իտալիայից շտապեց Կարթագեն:

3 Հաննիբալը մեկնեց արևելք, ուր դեռ կային հելլենիստական հզոր պետություններ, հույս ունենալով նրանց ուժերով հաղթել Հռոմին: Նա դիմեց Սելևկյան Անտիոքոս III արքային, որն ուրախությամբ ընդունեց անվանի զորավարին և, նրա խորհրդով, որոշեց օգնել Հունաստանի պոլիսներին՝ ազատվելու Հռոմի գերիշխանությունից: Սակայն փոխանակ օգտագործելու Հաննիբալի փորձն ու գիտելիքները, նախանձելով նրա փառքին, արքան Հաննիբալին հեռու էր պահում և անձամբ էր ղեկավարում իր զորքերը:

Ք.ծ.ա. 190 թ. Մագնեսիայի ճակատամարտում Անտիոքոս III-ի պարտությունից հետո Մեծ Հայքի կառավարիչ Արտաշես I-ինը և Ծոփքի կառավարիչ Զարեհը իրենց անկախ թագավորներ հռչակեցին:

Հաննիբալը, ում Հռոմի պահանջով Անտիոքոս III-ը պետք է նրանց հանձներ, փախավ Հայաստան: Արտաշես I-ը ուրախությամբ ընդունեց Հաննիբալին և նրա խորհրդով կառուցեց մայրաքաղաք Արտաշատը:

Հաննիբալը մոտ մեկ տարի մնաց Հայաստանում, ապա մեկնեց Բութանիա: Հռոմեացիները ի վերջո պարզեցին նրա գտնվելու վայրը, և թշնամիներին գերի չընկնելու համար Հաննիբալը թույն ընդունեց: Ք.ծ.ա. 183 թ. հռոմեացիները պատվով թաղեցին իրենց ոխերին թշնամուն, գերեզմանին հուշաքար տեղադրելով:

4

Արդեն թուլացած իր երբեմնի մրցակիցների դեմ Հռոմը նոր հաղթական պատերազմներ վարեց՝ հերթականությամբ վերացնելով նրանց անկախությունը: Ք.ծ.ա. 167 թ. ջախջախվեց և հռոմեական պրովինցիա դարձավ Մակեդոնիան: Ք.ծ.ա. 146 թ. հռոմեացիները գրավեցին և կործանեցին Կարթագենը: Քաղաքի տեղն անիծվեց և աղ ցանվեց, որ այդտեղ այլևս ոչին չաճի: Նույն թվականին պրովինցիայի վերածեցին Հունաստանի մեծ մասը: Միայն Աթենքը և Սպարտան պահպանեցին ձևական անկախություն:

Կարթագենի ծովածոցը և քաղաքի ավերակները